




Ազդարարության Trumpet's Sound **փող**

52-րդ հարկ, ԱՎԱՏԱՆԻՍ
ՍԵՂՏԵՍԻՔԵՐ-ՀՈԿՏԵՍԻՔԵՐ 2021





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱՋԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասեր ձկնորսներից.....Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Եգիպտոսից Քանան (1).....Դոն Սթորմըր

Մեծ նախաձեռնությունը.....Ռեքս Տիրլալ

Ըմսնիա կա, որ մարդուն շիտակ է թվում.....Քաղված

Մոռացված չէի.....Քաղված

Փողերի դատաստանները (2)QMBC պանորամա

Կանչը, խոստումը և արձագանքը.....Նելլ Բուքման

Մեղքով՝ մահ, Քրիստոսով՝ կյանք.....Վեր՝ Հապիպ Ալաճաճի

Ո՞վ է Հիսուսը.....Վեր. Հովսեփ Հովսեփյան

Ապանի թաթը.....Քաղված

Զմեռը Հայաստանում.....Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Դասեր ձկնորսներից

Արդյոք դուք Նրա հետևողներ եք: Արդյոք ձեր կյանքը արտացոլում է, որ Նրա աշակերտն եք: Արդյոք ուրիշները Տեր Հիսուսին տեսնում են ձեր կյանքում և գիտե՞ն, որ դուք Նրա հետևորդներից մեկն եք:

Դուկաս 5-րդ գլխում Տեր Հիսուսը Սիմոնին հարցրեց, թե արդյոք կարող է օգտագործել ձկնորսական նավակներից մեկը, որպեսզի կարողանա ամբոխին տեսնել ու քարոզել: Ձկնորսները նոր էին վերադարձել ձկնորսությունից ու իրենց ուռկաններն էին մաքրում հաջորդ օրվա համար: Այդ գիշեր ոչինչ չէին բռնել:

Երբ ուշադրությամբ կարդանք այս պատմությունը, ապա կտեսնենք Սիմոնի արած երեք գործողությունները, որոնք փոխեցին նրա կյանքը.

- նա հնազանդվեց Տիրոջը,
- խոնարհություն ցուցաբերեց,
- լսեց այն, ինչ ասվեց իրեն:

Սիմոնը չներժեց Տիրոջ ասածը: Նա ուրախ էր՝ տեսնելով, թե ինչպես Հիսուսը մտավ իր նավակը: Կարևոր է Հիսուսին մեր կյանքում ունենալը: Եթե Նրան չունենք մեր կյանքում, ապա երբեք Նրա հետևորդը չենք կարող լինել:

Հիսուսն Իր քարոզը ավարտելուց հետո նայեց ուժասպառ, հոգնած և հիասթափված ձկնորսներին, որոնք ամբողջ գիշեր աշխատել էին և ոչինչ չէին բռնել: Նա նրանց հանձնարարեց նավակն ավելի խորը տանել: Սիմոնը կարող էր առարկել՝ ասելով, թե հյուսնը ինչ կարող է հասկանալ ձկնորսությունից: Նա կարող էր Տիրոջը չհնազանդվել, սակայն ամբողջ խոնարհությամբ լսեց Նրա հրամանը և իր նավակը ավելի խորքը տարավ:

Եթե մեր կյանքում Տիրոջ հետ ավելի խորը չգնանք, ապա չենք տեսնի Նրա օրհնությունները: Վերջին անգամ ե՞րբ դժվարություններիդ մեջ խորը գնացիր Տիրոջ հետ: Հնարավոր է՝ այն ձեզ ավելի շատ ցավ պատճառեց: Նկատե՞ք, որ ձկնորսները հարց չբարձրացրին՝ ասելով,

թե իրենք ամեն ինչ գիտեն ձկնորսության մասին: Պետրոսը պարզապես ասաց. «Քո խոսքով՝ ուռկանը կզցեմ»:

Միրելի՛ բարեկամ, երբևէ փորձե՞լ ես Հիսուսին տանել քո վշտի, հիվանդության, անհաջողությունների և ցավի խորքերը: Արդյոք հնազանդվե՞լ ես Նրա պատվիրանին, արդյոք լսե՞լ ես Նրա ձայնը, հետևե՞լ ես Նրան: Տերը Պետրոսին պատվիրեց ուռկանը ծովը նետել: Կարող եմ պատկերացնել նրա դեմքի արտահայտությունը, քանի որ օրվա այդ պահը ձուկ որսալու սխալ ժամանակ էր: Այնուամենայնիվ, նրանք ապշած մնացին իրենց տեսած արդյունքից: Երբ հնազանդվեցին, նրանց ուռկաններն այնքան լցվեցին ձկներով, որ ստիպված եղան ուրիշների օգնությանը դիմել: Նրանք ձկներով երկու նավակ լցրին:

Միրելի՛ բարեկամ, երբ նրանք հնազանդվեցին, տեսան Աստծո օրհնությունը: Երբ հնազանդվեց, մենք նույնպես մեծ բաներ կտեսնենք մեր կյանքում: Ինչպես Սիմոնը, մենք նույնպես պետք է մեր անձերը խոնարհեցնենք: Երբ նա տեսավ պատահածը, ընկավ Հիսուսի ծրնկների մոտ ու ասաց. «Ինձնից հեռո՛ւ գնա, ո՛վ Տեր, որովհետև ես մեղավոր մարդ եմ»: Սիմոնը ճանաչեց ու հավատաց Հիսուսին:

Եթե չտեսնենք մեր մեղավորությունը, ապա մեզ համար փրկություն չի լինի, ոչ էլ երբևէ կտեսնենք Նրա օրհնությունը: Եթե չընդունենք մեր մեղավորության փաստը, ապա ձեռնունայն կվերադառնանք: Այդ օրը Սիմոնը մեծապես ցնցված էր: Նա իր ամբողջ կյանքում ձուկ էր որսացել, բայց այս հրաշքը ապշեցրել էր թե՛ իրեն, թե՛ իր հետ եղողներին:

Մեր կյանքը կարող է Պետրոսի (Սիմոնի) կյանքի նման լինել կամ չլինել, բայց մենք պետք է խոնարհաբար Տիրոջ մոտ գանք ու ասենք. «Տե՛ր, ի՞նչ ես ուզում, որ Քեզ համար անեմ»: Տերը հավիտենական սիրով սիրեց մեզ: Հիսուսը Սիմոնին ասաց. «Մի՛ վախեցիր, սրանից հետո մարդկանց ձկնորս ես լինելու»: Այսպիսով, նրանք իրենց նավակները ափ քաշեցին, ամեն բան թողեցին ու Տիրոջը հետևեցին:

Սակայն Սիմոնը նավակը թողեց որպես փոխված մարդ: Արդյոք ուզո՞ւմ ես տեսնել Նրա գործությունը քո կյանքում: Պատրա՞ստ ես հնազանդելու, խոնարհ ու լսող լինելու, պատրա՞ստ ես ամեն բան

թողնելու՝ Նրան հետևելու համար: Բարեկա՛ն, դու օրհնվելու ես, քանի որ տեսնելու ես Նրա հրաշալի գորությունը ու վերադառնալու ես՝ ասելով, որ ժամանակին դատարկաձեռն էիր, բայց Տերը օրհնեց քեզ այսքան արդյունքով:

Աստված բոլորիդ հետ:

Հ. Գ.

Եգիպտոսից Քանան (1)

Ելից գրքի պատմությունը պետք է սկսվի այն բացատրությամբ, թե եբրայեցիները ի՞նչ գործ ունեին Եգիպտոսում: Աբրահամին խոստում էր տրված, որ նրա սերունդները ժառանգելու են այն երկիրը, որտեղ ինքը պանդուխտ ու օտարական է եղել: Այդուհանդերձ, Տերը ցույց տվեց, որ երկար ժամանակ է պահանջվելու, մինչև եբրայեցիները ժառանգեն քանանացիների երկիրը: Աստված ասաց, որ Աբրահամի սերունդը չարչարվելու է, մինչև որ ամորհացիների անօրենությունը լրումին հասնի:

Եբրայեցիների՝ Եգիպտոս գնալու պատճառը սովն էր, որը վրա էր հասել Հակոբի տասը որդիների՝ իրենց եղբորը՝ Հովսեփին, Եգիպտոս ստրկության վաճառելուց տասը տարի անց: Հովսեփի ստրկությունից և բանտարկությունից տասներեք տարի անց Աստված փարավոնին զգուշացրեց գալիք սովի մասին, Հովսեփին փարավոնի երազները մեկնաբանելու կարողություն պարգևեց, ինչի շնորհիվ նա թագավորության մեջ հայտնի անձ դարձավ: Հովսեփին՝ որպես ստրուկի, վաճառելուց քսան տարի անց սովը սկսեց տարածվել Եգիպտոսի շրջակա երկրներում, ինչպես նաև Եգիպտոսում: Հակոբը Քանանում իմացավ, որ Եգիպտոսում սնունդ կա, և այնտեղ ուղարկեց իր նույն տասը որդիներին՝ ուտելիք գնելու համար:

Ի վերջո, Հակոբի ամբողջ ընտանիքը տեղափոխվեց Եգիպտոս և այնտեղ մնաց 430 տարի: Ժամանակ անցավ, Եգիպտոսի կառավարությունը փոխվեց, նոր փարավոն եկավ իշխանության և որոշ խեղա-

թյուրված պատճառաբանությունների հիման վրա որոշեց ստրկացնել երրայեցիներին՝ ստիպելով նրանց մի քանի քաղաքներ կառուցել իր համար:

Օրըստօրե ստրկությունը ավելի դաժան ու խիստ դարձավ: Իսրայելի բնակչության աճ գրանցելով փարավոնը երրայեցի մանկաբարձներին պատվիրեց թույլ տալ աղջիկ նորածիններին ապրել, բայց տղա նորածիններին՝ սպանել: Երբ փարավոնը հասկացավ, որ իր ծրագիրը չի գործում, հրամայեց բոլոր տղաներին գետը նետել:

Այստեղ հարց է առաջանում, թե ինչո՞ւ Աստված թույլ տվեց սա: Արդյոք այս դաժան ստրկությունն իսկապե՞ս անհրաժեշտ էր: Ո՞րն էր Իսրայելի ստրկության երկար շրջանի նպատակը: Գուցե ժողովուրդը Աստծո կամքը սխալ էր հասկացել:

Երկու հիմնական պատճառ կա, որոնցով կարող ենք պնդել, որ երրայեցիներն Աստծո կամքը սխալ չէին հասկացել: Նախ՝ Աստված հատուկ կերպով Հակոբին պատվիրել էր Եգիպտոս գնալ, երբ սովը գազաթնակետին հասավ: Սակայն Աստված Աբրահամին ավելի վաղ ասել էր, որ նրա սերունդը 400 տարի պետք է ստրկության ենթարկվի մեկ այլ ազգի կողմից: Ամորհացիների անօրենությունը դեռ չէր լցվել, որ Աստված Իր դատաստանը իրականացնելու նրանց վրա: Նրանք տակավին ապաշխարելու ժամանակ ունեին: Այնուհետև ժամանակ էր գալու, երբ այլևս ապաշխարության առիթ չէր տրվելու, այլ միայն դատաստան, բայց մինչև այդ ժամանակի հասնելը Աբրահամի սերունդը պետք է հեռանար այդ երկրից:

Կա ևս մեկ պատճառ: 19-րդ դարում ամերիկացի գրող Ջեյմս Բար Ուոլքերը «Փրկության ծրագրի փիլիսոփայությունը» անունով մի գիրք գրեց: Այնտեղ նա պնդեց քրիստոնեական հայտնության ճշմարտությունը և ցույց տվեց, որ սուրբգրության մեջ բացահայտված փրկության ծրագիրը միակ հնարավոր ուղին էր, որով Աստված կարող է Իր Անձը հայտնել մարդկությանը:

Աստված ուզում էր Իրեն նվիրված ազգ ընտրել, որպեսզի նրանց միջոցով Իր Անձը հայտնել մարդկությանը: Եթե միայն մեկ հավատացող մարդ լինել, ապա նա կարող էր ճշմարտությանը վկա լինել, քանի դեռ ողջ է: Երբ նա մահանար, ապա այլևս ուրիշ մարդ չէր

գտնվի աստվածային ճշմարտության վկա լինելու համար: Հորը սրա դասական օրինակն է: Մենք ոչինչ չգիտենք նրա ընտանիքի հավատքի մասին:

Անհրաժեշտ էր մի ժողովուրդ, որը կպահպաներ ճշմարտությունը: Սրա համար պետք էր մի ազգ, որի անդամներն իրար ամուր կբռնեին: Բայց ինչպե՞ս ազգն իրար ամուր բռնի, որպեսզի Աստված կարողանա նրան օգտագործել Իր նպատակների համար: Ի՞նչն է միավորում մարդկանց: Հավանաբար ընդհանուր ժառանգությունը, մեկ մարդուց սերված լինելը, ընդհանուր լեզուն և գրականությունը:

Սակայն ևս մեկ բան էր անհրաժեշտ: Պետք էր լրացուցիչ ինչ-որ բան, որը կապեր էթնիկ խմբին: Իսրայելացիներին միմյանց հետ կապող ուժեղ կապը իրենց պատմության մեջ ունեցած ընդհանուր տառապանքն է: Բոլոր իսրայելացիները տառապեցին՝ որպես մեկ անձ. ոչ ոք չխուսափեց այն տառապանքից, որը փորձառեցին ազգովի: Այս տառապանքը ավելի սաստկացավ, երբ Մովսեսը գնաց փարավոնի մոտ՝ Աստծո պատգամը փոխանցելու համար: Առաջիկա մի քանի ամիսների մեջ նրանք և՛ հույսով էին լցվում, և՛ հուսահատությամբ: Երբեմն թվում էր՝ ազատությունն այնքան մոտ է, և հույս ունեին փրկվելու, սակայն փարավոնը հրաժարվում էր իր տված խոստումից, և նրանք կրկին հուսահատվում էին:

Նույնիսկ ազատ արձակվելուց հետո նրանց հույսը կրկին մարեց, երբ տեսան իրենց հետապնդող փարավոնի կառքերը: Միայն Կարմիր ծովն անցնելուց հետո հասկացան, որ ապահովության մեջ են:

Ստրկությունից ազատվելը և հրեական Չատիկի տոնակատարությունը մինչև օրս հիշվում է հրեաների կողմից: Ամեն տարի հրեական Չատիկը միաբանում է աշխարհի հրեաներին ու հիշեցնում, որ իրենք մի ազգ են, որը վերապրեց բնաջնջման բոլոր փորձերը:

Սակայն սա չի նշանակում, որ բոլոր իսրայելացիները Տիրոջը հավատարիմ եղան: Սա նշանակում է, որ կար մի ազգ, որի մեջ ճշմարտությունը կարող էր բնակվել: Նույնիսկ ազգի պատմության ամենամռայլ օրերում տակավին կար 7000 մարդ, որոնք ծունկի չեկան իրենց շուրջը գտնվող կեղծ աստվածների առաջ:

Եզիպտոսի ստրկությունը այժմեական էր: Այն Աբրահամի, Իսահակի և Հակոբի սերունդներից մի ազգ դուրս բերեց, որը միակ Աստծո ճշմարտությունը սերնդեսերունդ փոխանցելու էր մինչև Մեսիայի գալուստը:

Սա հաշվի առնելով՝ մենք առաջիկա սերտողություններում շարունակելու ենք քննարկել Ելեց գրքի պատգամը:

Դ-ոն Սթորմըր

Մեծ նախաձեռնությունը

Ռադիոյով ցնցող նորություն լսեցի: Միացյալ Նահանգներում մի գիտնական փորձում է մարդու կրկնօրինակը ստանալ: Նախագահ Բլիմթոնը հինգ տարվա արգելք դրեց այս փորձարկումների վրա: Մինչ խորհում էի լսածիս մասին, երևակայությունս շատ առաջ գնաց: Վերջերս այս փորձարկումը ոչխարների վրա հաջողությամբ կատարել են:

Արդյոք աշխարհը ինչպիսի՞ վայր կլինի, եթե սկսեն մարդկանց կլոնավորումը: Սա կնշանակի, որ մարդը կարողանալու է իր կրկնօրինակը ստանալ, ընդհուպ մինչև իր աչքերի գույնը: Ի՞նչ է սա: Արդյոք հեռավոր, ոչ բարոյական ապագայում կարողանալու՞ ենք պահպանել մեր անձի կրկնօրինակը սառեցված միջավայրում, որպեսզի օրգանների անհրաժեշտության ժամանակ օգտագործենք այն: Արդյոք ապագա բանակները կլոնավորված զինվորների՞ց են կազմվելու: Մենք իսկապես կանգնած ենք արտառոց հնարավորությունների սարսափելի եզրին:

Մեր անձնական կյանքում արդյո՞ք տեխնոլոգիայի անգուսպ հայտնագործություններն ու փորձարկումները չեն մեր սրտերը ապագայի նկատմամբ վախով լցնողը: Մենք ավելի անմիջական խնդիրներ ունենք, ինչպիսիք են՝ առողջությունը, հարաբերությունները, աշխա-

տանքը կամ այլ փոփոխություններ, որոնք ստիպում են մեզ մտածել, թե ինչ է լինելու մեզ հետ ապագայում:

Աստվածաբանները հրաշալի բառ ունեն, որը կարող է հանգստացնել մեր հոգիները, երբ այս ամենի մասին սկսենք մտածել: Այդ բառը կանխատեսելն է: Այն օգտագործված է՝ նկարագրելու այն փաստը, որ Աստված միշտ այնտեղ է, Նա է նախաձեռնությունն Իր ձեռքը վերցնողը: Մինչ ճանապարհորդենք դեպի անհայտ ապագա, մենք կտեսնենք, որ Աստված արդեն այնտեղ է, Նա արդեն նախաձեռնել է Իր սեփական ռազմավարական գործողությունը: Աստված նախաձեռնող է և ոչ միայն Իր ստեղծագործության սուկ արձագանքող: Այս միտքը ամփոփված է Աստվածաշնչի առաջին երկու բառերում. «Սկզբում Աստված...» (Ծննդ. 1:1): Աստված ստեղծեց աշխարհը և ավարտելու է այն ժամանակ, երբ Իրեն հաճելի լինի:

Աստված նախաձեռնեց մեր փրկությունը և այն հասցնելու է ավարտին: «Նա՛ Ով ձեր մեջ սկսեց բարի գործը, այն կհասցնի իր ավարտին մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1:6): «Նախ Նա՛ մեզ սիրեց» (Ա Հովհ. 4:19):

Աստված միշտ նախաձեռնության մեջ է և երբեք անակնալի չի գալիս մեղավոր մարդկանց կատարած գործողություններից կամ մշակված ծրագրերից: Եթե ապագային նայենք այս տեսանկյունից, ապա մեր ամբողջ վերաբերմունքը կսկսի փոխվել: Փոխանակ պարզապես հույս ունենալու, որ Աստված ինչ-որ կերպ կարող է ինչ-որ բան անել իրավիճակին ի պատասխան, մենք կսկսենք մտածել, որ Նա արդեն նախաձեռնության մեջ է, և մեր խնդիրն է հասկանալ, թե որն է այն, և ըստ այդմ առաջ շարժվել:

Աստծո կանխատեսող լինելը փոխում է մեր վերաբերմունքը ոչ միայն ապագայի հանդեպ, այլև մարդկանց: Երբ միանում ենք եկեղեցական նոր համայնքի, տնային խմբակի, կամ հանդիպում ենք նոր մարդու, մենք չենք ասում. «Ի՞նչ անեն, որ Աստված այս խմբին կամ մարդուն փոխի այնպես, ինչպես ես եմ ուզում նրան տեսնել»: Մենք պետք է հասկանանք, որ Աստված արդեն աշխատում է այդ խմբի կամ մարդու մեջ: Ուստի այսպես պետք է ասենք. «Ի՞նչ աշխատանքի մեջ է Աստված այստեղ և ինչպե՞ս կարող եմ համագործակ-

ցել Նրա սքանչելի ծրագրին այս խմբի կամ այս մարդու համար»: Ահա թե ինչ նկատի ունենալու էր Պողոսը, երբ ասաց. «Մենք միասին Աստծո աշխատավորներն ենք» (Ա Կորնթ. 3:9):

Անձնական մակարդակի վրա հուսադրող է իմանալը, որ Աստծո հետ մեր ունեցած հարաբերությունը նույնպես նախաձեռնված է Նրա կողմից: «Ինչպես մեզ Նրանով ընտրեց աշխարհի հիմնումից առաջ» (Եփես. 1:4):

Ապագան շատ ավելի գրավիչ է, երբ գիտենք, որ Աստված արդեն այնտեղ է և արդեն աշխատանքի մեջ է: Նա այդ ամենը նախապես տեսել է: Ի վերջո, ապագան շատ ավելի մեծ ձեռքբերում է, քան մեր, ուստի եկե՛ք դրականորեն կենտրոնանանք այն բանի վրա, ինչի համար Աստված մեզ կանչել է, և վստահորեն շարունակենք դա կատարել:

Ռեքս Տիրլավ

**«Ճամփա կա, որ մարդուն շիտակ է թվում,
բայց դրա վերջում մահվան ճամփաներն են»**

(Առակ. 14:12)

Այսօր մեզ համար սովորական է դարձել այն, որ դեռևս կրթություն և մասնագիտություն չստացած երիտասարդները լքում են հայրական տունը՝ ինքնուրույն ապրելու համար: Նրանք ձգտում են անկախության և ազատության, որպեսզի ամեն ինչ ինքնուրույն լուծելու հնարավորություն ունենան: Ծնողների քննադատությունը նրանց կողմից ընկալվում է որպես անվստահություն իրենց կյանքի հանդեպ: Նրանք ուզում են ազատ լինել ծնողական ազդեցությունից՝ սեփական ծրագրերն իրագործելու համար:

Անառակ որդին, որի մասին խոսվում է Գուլ. 15-ում, այդպիսի զգա-

ցումներ ուներ և դրա համար գնաց հեռավոր երկիր: Նա կարծում էր, թե այնտեղ իսկապես կկարողանա ազատ ու անկախ լինել: Սակայն ի՞նչ է կատարվում այդպիսի երիտասարդների հետ, երբ այս աշխարհի իշխանը՝ սատանան, քաշում է նրանց իր ցանցի մեջ: Այն երիտասարդ տղայի հարստությունն աղքատության վերածվեց, իսկ ազատությունը՝ ստրկության: Այս աշխարհի կարճաժամկետ հաճույքների համար նա ստիպված եղավ թանկ վճարել:

Նրանց, ովքեր հայտնվել են նման իրավիճակում, Տերն ասում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը. ոչ մեկը Հորը չի գա, բացի Ինձանով» (Հովհ. 14:6): Նա ուրախությամբ բնակարան կտա մեզ, որտեղ մտերիմ փոխհարաբերություն կունենանք մեր Հայր Աստծո հետ: Մենք կունենանք սեր և անվտանգություն: Նա, ով կրնա հոգևոր Աստծո դատավճիռն իր ընկած վիճակի համար և խոստովանի իր մեղքերը, կարող է հավատքով ընդունել այն, որ Քրիստոսը չարչարվեց և մահացավ խաչի վրա իր համար: Այդպիսի մարդը կդառնա Աստծո երջանիկ զավակը, և Աստված կլինի նրա Հայրը:

Քաղված

Մոռացված չէի

«Ընդհանրապես ձմեռային առավոտները ցուրտ են ու դժգույն Միջիգանում, հատկապես երբ սովորականից շուտ էի արթնանում աղոթելու համար, - ասում է Աննան: - Աստծո հետ ունեցած Մենիկ պահսօգնում էր ինձ՝ ոգևորվելու գործիս մեջ՝ որպես նախակրթարանի ուսուցչուհի: Սակայն որոշ առավոտներ, երբ դեռ մութ էր, մտածում էի, թե ինչ լավ կլիներ, եթե մեկին ունենայի, ում հետ կարթնանայի: Գործս սիրում էի, սակայն ավելի նախընտրում էի տանտիկին և մայր լինել: Մինչև հիմա ճիշտ անձին չեմ հանդիպել: Տե՛ր, Դու խոստացել ես, որ եթե մենք Քեզ համար հաճելի լինենք, մեր սրտի փափազը կտաս, - ասացի բարձրաձայն: - Ես Քեզանով ուրախ եմ, ուստի... ե՛րբ:

Մենյակում լռություն էր: Բայց միանգամից Սուրբ Գրքից մի համար եկավ միտքս. «... Ես, սակայն, քեզ չեմ մոռանա: Ահա Ես Իմ ձեռքերի ափերի մեջ դրոշմեցի քեզ...» (Եսայ. 49:15-16): Արդյոք իսկապե՞ս Աստված ուղղակիորեն ինձ էր ասում: Երբ առօրյա հոգևոր խորհրդակցության տեսրակս բացեցի, այդ օրվա հատվածը զարմացրեց ինձ. Եսայ. 49:15-16-ն էր, որ քիչ առաջ մտքիս մեջ ցայտել էր: Թվում էր՝ իսկապես Աստված ինձ հետ խոսում էր, բայց դեռ...

Տե՛ր չեմ ուզում կասկածամիտ Թովմաս լինել, սակայն եթե իրապես ինձ քաջալերում ես այս բառերով, կարո՞ղ ես ևս մեկ անգամ նույնը ասել ինձ:

Այդ հետմիջօրեին, աղոթքի խմբակ հաճախող մի տիկնոջ տան կողքով էի անցնում: Տարբեր բաներ էինք փորձում: Ամեն մեկս ընտրել էինք խմբից մեկին, ում համար աղոթելու էինք՝ առանց անունը հայտնելու, նրան քաջալերելու երկտողերով և փոքրիկ նվերներով: Գաղտնագողի փոքր բան դրեցի բարեկամուհուս փոստարկղի մեջ:

Երբ տուն հասա, տեսա, որ իմ փոստարկղում էլ փոքր նվեր կա: Բացեցի տուփը: Չարդասեղ էր, որ ձեռքի նման էր, որի մեջ փոքրիկ երեխա կար: Նաև մի բացիկ կար, որի վրա Սուրբ Գրքից կարճ համար էր գրված՝ Եսայ. 49:15-16:

Գրեթե երկու տարի անց հանդիպեցի այն անձին, ով իմ ամուսինը եղավ: Միասնաբար մեծացնում ենք չորս հրաշալի գավակներ: Իրականում սեր գտա ամուսնուս հանդիպելուց առաջ, երբ Աստված երեք անգամ ինձ հասավ և հիշեցրեց, որ չի մոռացել:

«Մի՞թե կինը կմոռանա իր կաթնկեր մանկանը, կամ չի գթա իր արգանդի ծննդին. հիրավի, նրանք կարող են մոռանալ, Ես, սակայն, քեզ չեմ մոռանա: Ահա Ես Իմ ձեռքերի ափերի մեջ դրոշմեցի քեզ, քո պարիսպները շարունակ իմ առաջ են» (Եսայ. 49:15-16): Ամեն...»

Քաղված՝ «Բարեպառուղ ձիթենիին» գրքից



Փողերի դատաստանները (2)

5-րդ փողի դատաստանի ժամանակ Հովհաննեսը տեսավ մի աստղ, որը երկնքից երկիր ընկավ: Աստղին (հմմտ. Ես. 14:12, Գուկ. 10:18) տրվեց Անդունդի գուրի (փոսի) բանալին, որը բացելով՝ նա թույլ տվեց, որ ծուխ բարձրանա, դրանով իսկ խավարեցնելով արևն ու երկինքը: Մխից դուրս եկող մորեխներին (հմմտ. Բ Դետ. 2:4) հրաման տրվեց հինգ ամիս խայթել և տանջել բոլոր այն մարդկանց, որոնց ճակատին Աստծո կնիքը չկար: Յավն այնքան սաստիկ է լինելու, որ մարդիկ ուզենալու են մահանալ, բայց մահը նրանցից փախչելու է (տե՛ս Հայտ. 9:1-6):

Հնարավոր չէ, որ մենք ամբողջությամբ հասկանանք այստեղ օգտագործված խորհրդանիշները, բայց համեմատելով սուրբգրության այլ հատվածների հետ՝ թվում է, թե աստղը հենց սատանան է: Մենք գիտենք, որ Տեր Հիսուսն արդեն դատապարտել է սատանային՝ խաչի վրա կատարած աշխատանքով (Եբր. 2:14): Եվ չնայած նա այժմ օղի իշխանն է (Եփես. 2:2), բայց շուտով երկիր է գցվելու իր չար ոգիների հետ միասին, որոնք կատարում են իր գործը (Հայտ. 12:7-9): Վերոհիշյալ հատվածներից երևում է, որ Տեր Հիսուսը նրան իրավունք է տալու հինգ ամիս արձակելու մեղսագործ սարսափելի հրեշտակներին, որպեսզի նրանք իրենց կատաղությունը թափեն այն մարդկանց վրա, ովքեր իրենց ճակատին չունեն Աստծո կնիքը:

6-րդ փողի դատաստանի ժամանակ Հովհաննեսը Աստծո առջև գտնվող ոսկե գոհասեղանի չորս եղջյուրներից մի ձայն լսեց: 6-րդ հրեշտակին հրաման տրվեց. «Արձակի՛ր Եփրատ մեծ գետի վրա կապված չորս հրեշտակներին» (Հայտ. 9:14): Երբ դա արվեց, 200 միլիոն հեծյալ զորքի իշխանություն տրվեց սպանելու մարդկության մեկ երրորդին: Չիերի նկարագրությունը ցույց է տալիս, որ դրանք դիվային էակների գերբնական բանակ են (Հայտ. 9:17-19), և դա մեզ կհանգեցնի այն եզրակացությանը, որ Եփրատում կապված չորս հրեշտակները դևեր են կամ չար հրեշտակներ, որոնք օգտագործվելու են Աստծո կողմից Իր նպատակները իրագործելու համար:

Նախորդ սերտողության մեջ նշեցինք, որ Հայտ. 6:8-ը ցույց է տալիս, որ մոտավորապես 1,500,000,000 մարդ սպանվելու է 4-րդ կնիքի դատաստանի ժամանակ: Եվ շատ ուրիշներ սպանվելու են 6-րդ կնիքի դատաստանի ժամանակ և 1-ին, 2-րդ ու 3-րդ փողերի դատաստանների ժամանակ: Այստեղ 6-րդ փողի դատաստանի ժամանակ ևս 1,000,000,000 մարդ սպանվելու է: Նման կոտորածը մեզ սարսափով է լցնում, բայց կարող ենք վստահ լինել, որ ամենափնաստուն և ամենագետ Աստված պետք է այդպես վարվի, որպեսզի երկիրը մաքրի այն ամենից, ինչ հակառակվում է Իրեն: Որքա՞ն հրատապ է, որ մենք՝ Աստծո շնորհքի շրջանում ապրողներս, համոզվենք, որ ապաշխարության և հավատքի միջոցով ճիշտ հարաբերությունների մեջ ենք մտել Աստծո հետ, և որ մենք Ավետարանը հասցնում ենք մեր շրջապատին: Որքա՞ն սարսափելի կլինի անհավատների համար այն օրը. սակայն կարդում ենք ցավալի մի խոսք. «Եվ այն մարդիկ, որ չսպանվեցին այս հարվածներից, չապաշխարեցին իրենց ձեռքի գործերից...» (Հայտ. 9:20-21):

3. Հրեշտակը և գրքույկը (10:1-11)

Այժմ դիտարկելու ենք երկրորդ միջանկյալ ժամանակը, որի դեպքերը տեղի են ունենում 6-րդ և 7-րդ փողերի դատաստանների ժամանակ: Հովհաննեսը տեսնում է մեկ այլ հզոր հրեշտակի (հմմտ. Հայտ. 5:2): Նրա տեսքն ու հատկանիշներն այնքան տպավորիչ են, որ ոմանք ասում են, թե նա պետք է լինի մեծ հրեշտակներից մեկը, կամ նույնիսկ ինքը՝ Տեր Հիսուսը: Անշուշտ, որոշ նմանություններ կան այստեղ նկարագրվածի և Տեր Հիսուսի միջև (տե՛ս Հայտ. 1:12-16):

Պետք է հիշել, որ Հին Կտակարանում «հրեշտակների» (երբեմն «մարդկանց») մի քանի հայտնություններ են եղել, բայց դրանք պարզապես Քրիստոսի նախամարմնավորված հայտնություններն են: Նա՞ որպես Տիրոջ հրեշտակ, հայտնվեց Հազարին անապատում: Սա հաստատվում է Ծննդ 16:13-ում. «Եվ նա իր հետ խոսող Տիրոջ անունը կանչեց. «Դ-ո՛ւ, Աստված, տեսնում ես ինձ», որովհետև ասաց. «Ես էլ փնտրեցի Նրան, Ով ինձ տեսնում է»»: Ավելին, նախամարմնավորված Քրիստոսը՝ որպես մարդ, հայտնվեց Հեսուին Երիբովից

դուրս (տե՛ս Հեսու 5:13-15): Նա՛ որպես Տիրոջ հրեշտակ, հայտնվեց նաև Սամսոնի ծնողներին (տե՛ս Գատ. 13:3-22):

Մենք չպետք է բաց թողնենք հրեշտակի հանդիսավոր խոսքը. «... Այլևս ժամանակ չի լինելու, այլ յոթերորդ հրեշտակի ձայնի օրերին, երբ նա փողը հնչեցնի, կկատարվի Աստծո խորհուրդը, ինչպես հայտարարել էր Իր ծառաներին՝ մարգարեներին» (Հայտ. 10:6-7): Մենք ենթադրում ենք, որ այս խորհուրդը վերաբերում է Մեծ նեղության վերաբերյալ Հին Կտակարանի մարգարեությունների հայտնությանը և կատարմանը:

Հովհաննեսի՝ երկնքից լսած ձայնը (հմր 4) այնուհետև ասաց. «Գնա՛, վերցրո՛ւ այն բաց գրքույկը, որ ծովի ու ցամաքի վրա կանգնած հրեշտակի ձեռքին է» (Հայտ. 10:8): Այսպիսով, Հովհաննեսը վերցրեց գրքույկը և կերավ այն, և ինչպես հրեշտակն էր ասել Հովհաննեսին (հմր 9), այն բերանում մեղրի պես քաղցր համ ուներ, բայց փորում՝ դառնություն: Քաղցրությունը վերաբերում է այն օրհնություններին, որոնք հոսելու են Մեծ նեղության դատաստանների ավարտից հետո, իսկ դառնությունը վերաբերում է այն ցավին ու տառապանքին, որը պետք է ճաշակել նախքան օրհնությունները վայելելը: Այնուհետև Հովհաննեսին ասվում է. «Դու նորից պիտի մարգարեություն անես շատ ժողովուրդների և ազգերի ու լեզուների և թագավորների առաջ» (Հայտ. 10:11):

4. Երկու վկաները (11:1-14)

Հովհաննեսին ասվում է, որ Աստծո տաճարն ու գոհասեղանը չափի և հաշվի այնտեղ պաշտամունք անողներին: Այստեղ տաճարը Հերովդեսի տաճարն է, որը ավերվեց հռոմեացիների կողմից մ.թ. 70թ.-ին ու երբեք չվերակառուցվեց: Այնուամենայնիվ, Մեծ նեղության ժամանակաշրջանի սկզբում Նեռի օրհնությամբ և պաշտպանությամբ մեկ այլ տաճար պիտի կառուցվի, որպեսզի հրեաները կրկին կարողանան պահպանել իրենց կրոնը: Սա է այն տաճարը, որը Հովհաննեսը պետք է չափի: Դրա նպատակը մարդկանց հոգևոր վիճակը գնահատելն է:

13-րդ գլխից իմանում ենք, որ հրեաները որպես իրենց առաջնորդ

ընդունելու են համաշխարհային դիկտատորի (առաջին գազանին), որը հայտնի է որպես կեղծ մարգարե (տե՛ս Հայտ. 16:13, 19:20, 20:10): Այսպիսով, նրանք սրտով շատ հեռու կլինեն Աստծուց, և այս վիճակը կչարունակվի մինչև Մեծ նեղության ավարտը: Նրանք հետևաբար չեն լինելու այն հավատարիմ վկաները, որոնք Աստված նախատեսել էր, ուստի Աստված բարձրացնելու է Իր սեփական վկաներին:

Աստված հրեաների միջից ընտրելու է երկու հավատարիմ տղամարդ, և նրանք կանգնելու են Երուսաղեմում ու վկայելու են օրվա բոլոր չարիքների դեմ՝ արդարություն քարոզելով և երեքուկես տարի մարդկանց վրա աստվածային դատաստաններ իջեցնելով: Այս շրջանը մոտավորապես կհամընկնի Մեծ նեղության հետ: Նա, ով կփորձի վնասել նրանց, կսպանվի նրանց բերանից բխող կրակից: Նրանք կմիավորեն Մովսեսի և Եղիայի ուժերը՝ ջրերը վերածելով արյան, հարվածելով երկրին ամեն տեսակ ժանտախտով, որքան հաճախ որ ուզենան, և երկրից անձրևը կտրելով (տե՛ս Հայտ. 11:3-6): Նրանք վերամարմնավորված Մովսեսն ու Եղիան չեն: Նրանք ավարտելու են այս մարգարեների անավարտ թողած գործը:

Երբ նրանք ավարտեն իրենց վկայությունը, Աստված թույլ է տալու անդունդից դուրս եկած գազանին (ակնհայտորեն սատանայի էներգիայով կամ չար ոգով, հմմտ. Հայտ. 9:1-11) պատերազմել նրանց հետ ու սպանել նրանց: Մարդիկ տոնելու են և նվերներ են փոխանակելու, բայց երեքուկես օրից հետո Աստված նրանց կյանք է տալու, և նրանք նորից կանգնելու են՝ սարսափ ներշնչելով մարդկանց մեջ: Այնուհետև Երկնքից մի բարձր ձայն կհնչի, որն ասելու է. «Վե՛ր կացեք, ելե՛ք այստեղ» (Հայտ. 11:12), և մարդիկ տեսնելու են նրանց երկինք բարձրանալիս:

Այդ ժամանակ տեղի կունենա ուժեղ երկրաշարժ, որի հետևանքով քաղաքի տասներորդ մասը կփլուզվի, և կգոհվի յոթ հազար մարդ: Տակավին ողջ մնացած մարդիկ չեն ապաշխարելու, չնայած նրանք երկնքի Աստծուն փառք են տալու: Այնուհետև կարդում ենք. «Երկրորդ վայն էլ անցավ. ահա շուտով կգա երրորդ վայր» (Հայտ. 11:14):

(Շարունակելի)

Կանչը, խոստումը և արձագանքը (Կող. 3:1-5)

Պողոս առաքյալի գրվածքներին բնորոշ են հիմնավորված փաստարկները: Նա իր խոսքը սկսում է հոգևոր մեծ ճշմարտություններով ու իր միտքը հիմնավորելով՝ շարունակում է, մինչև հասնի հավատացյալների գործնական կյանքին: Նա միշտ մեկ նպատակ է հետապնդում՝ կառուցել սուրբերին, որպեսզի նրանք փորձառաբար ճանաչեն լիուլի կյանքը (տե՛ս Հովհ. 10:10):

Եկե՛ք հետևենք նրա տրամաբանությանը՝ սերտելով Կող. 3-րդ գլխի առաջին մի քանի համարները:

Կանչը

«Եթե Քրիստոսի հետ հարություն եք առել, ուրեմն, վերին բաները փնտրեցեք, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում: Վերին բաների մասին մտածեցեք և ո՛չ թե այն, որ երկրի վրա է: Որովհետև դուք մեռաք, և ձեր կյանքը պահված է Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ» (Կող. 3:1-3):

Պողոսը Կողոսիայի հավատացյալներին հիշեցնում է այն հիմնարար ճշմարտությունը, որի մասին նրանք վկայեցին իրենց մկրտության ժամանակ: Այդ ճշմարտությունը հետևյալն էր. նրանք ոչ միայն Տեր Հիսուսի մահվանը միացան, այլև Նրա հետ հարություն առան: Սա Աստված անձամբ կատարեց, և սա մեր փրկության հիմքն է: Պողոսն այս ճշմարտությունը ավելի մանրամասն նկարագրում է Հռոմ. 6:1-11-ում:

Ինչո՞ւ Աստված սա արեց: Քանի որ ոչ միայն մեր մեղքերը մեզ բաժանեցին Աստծուց, այլև մեր մեղքը՝ մեր ապստամբ ու փչացած բնույթը, որից առաջանում են մեր մեղքերը: Սակայն Աստված մեղավոր մարդուն հարություն տվեց Քրիստոսով: Սա շատ ավելին է, քան ներված լինելը. մենք ոչ թե պարզապես ներված մեղավորներ ենք, այլ Քրիստոսով նոր արարածներ (տե՛ս Բ Կորնթ. 5:17 և Եփես. 2:10):

Քանի որ այս ճշմարտությունը Աստծո հետ մեր ունեցած հարաբերությունների հիմքն է, Երկինքը բաց է մեզ համար, և հետևաբար Պողոսը հավատացյալներին կոչ է անում՝ ասելով. «Վերին բաները փնտրեցեք», այլևս երկրին կապված մի՛ եղեք (տե՛ս Հովհ. 17:14):

Խնդիրն այն է, որ մենք չենք զգում, որ մեր մեղավոր անձը ընդհանրապես մահացած է: Մեր մեղավոր բնույթը իրականություն է, և մինչ Տիրոջ հետ շարունակում ենք մեր կյանքը, ավելի ակնհայտ է դառնում այս իրողությունը մեզ համար: Բայց Պողոսը չի խոսում այն մասին, թե ինչ պետք է զգանք, այլ ասում է, թե Աստված ինչ արեց հոգևոր հարթակի վրա: Նա նկարագրում է մեր ունեցած դիրքն Աստծո առջև և ոչ թե մեր ներկայիս վիճակը: Շատ կարևոր է, որ մենք՝ որպես Իր փրկված զավակներ, տարբերակենք Տիրոջ առջև մեր ունեցած դիրքը:

Խոստումը

«Երբ Քրիստոսը, Որ մեր կյանքն է, հայտնվի, այն ժամանակ դուք էլ Նրա հետ փառքով պիտի հայտնվեք» (Կող. 3:4):

Պողոսը վստահեցնում է հավատացյալներին, որ երբ Քրիստոսը հայտնվի, նրանք լիովին ազատ են լինելու մեղքից: Նույն մտքի մասին խոսում է նաև Հովհաննեսը.

«Սիրելիներ, մենք հիմա Աստծո որդիներն ենք, ու դեռևս հայտնի չէ, թե ինչ ենք լինելու. բայց գիտենք, որ երբ Նա հայտնվի, Նրա նման պիտի լինենք, քանի որ Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես որ Նա է» (Ա Հովհ. 3:2):

Քրիստոսն այժմ մեր կյանքն է, այսինքն՝ Նա է այն կյանքը, որը Մուրբ Հոգու միջոցով մեր մահացած հոգուն հավիտենական կյանքի համար հարություն տվեց: Այս կյանքը ստանալ նշանակում է վերըստին ծնվել: Երբ Տեր Հիսուսը փառքով վերադառնա, և աշխարհը տեսնի Նրան, մեր կյանքում եղած փառքը տեսանելի կլինի ամենքին:

Արձագանքը

«Ուստի սպանեցե՛ք ձեր երկրավոր անդամները՝ պոռնկությունը,

պղծությունը, անասնձ կիրքը, չար ցանկությունը և ազահությունը, որ կռապաշտություն է» (Կող. 3:5):

Այս համարից կարող ենք տեսնել, որ Պողոսը լիովին տեղյակ էր այն բանի մասին, որ մեղքը դեռևս առկա է մեր մեջ, և որ այս կյանքում այն հզոր ուժ է, որի հետ պետք է հաշվի նստել: Բայց քանի որ հավատացյալները Քրիստոսի հետ մեռան և հարություն առան, ապա Պողոսը իր ընթերցողներին կոչ է անում սպանել մեղավոր բնությունը: Հռոմ. 6-րդ գլխում նա նույն հորդորն է տալիս՝ ասելով.

«Այսուհետև թող մեղքը չթագավորի ձեր մահկանացու մարմինների մեջ՝ հնազանդեցնելու ձեզ իր ցանկություններին» (Հռոմ. 6:12):

Պողոսը, իհարկե, նկատի չունի, որ մարդկային կամքի ուժով կարող ենք արդար դառնալ: Իր ասածը հետևյալն է. քանի որ հավատացյալներս Տիրոջ կողմից փրկվեցինք ու Հոգու կողմից կնքվեցինք, ուրեմն կարող ենք և պետք է քայլենք հարություն առած կյանքով, որը Նա մեզ հաղորդեց: Սա հստակ գրված է Հռոմ. 8:12-14-ի մեջ.

«Ուրեմն, եղբայրներ, մենք պարտական չենք մարմնին, ըստ մարմնի ապրելուն: Որովհետև, եթե մարմնավորապես ապրեք՝ կմեռնեք, իսկ եթե Հոգով մարմնի գործերը սպանեք՝ կապրեք: Որովհետև, ովքեր Աստծո Հոգով են առաջնորդվում, նրանք են Աստծո որդիները» (Հռոմ. 8:12-14):

Մենք մեր ուժով չենք կարող հաղթել մեր բնության մեղավոր հակումներին. դրանք մեկ օրում չեն վերանա: Մեզ պատվիրված է անընդհատ փնտրել ու հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը, որպեսզի մեղքը մեզ չվերցնի իր վերահսկողության տակ: Նա կարող է փոխակերպել մեր կյանքը, որպեսզի Տեր Հիսուս Քրիստոսի հարություն առած կյանքը ավելի ու ավելի տեսանելի լինի մեր մեջ:

Կոչն այն է, որ ապրենք այնպես, կարծես թե Երկնքի դուռը բաց է: Նա խոստացել է, որ ամբողջությամբ փոխվելու ենք, երբ Ինքը վերադառնա: Ուստի պետք է արձագանքենք՝ ասելով, որ պատրաստ ենք այս մեղավոր բնությունից հեռանալու ու Սուրբ Հոգու առաջնորդությանը հետևելու, որպեսզի Տեր Հիսուսը թագավորի մեր մեջ և մեր միջոցով:

Մեղքով՝ մահ, Քրիստոսով՝ կյանք (Եփես. 2:1-9)

Այս համարներում Պողոս առաքյալը գեղեցիկ կերպով ներկայացնում է ամբողջ մարդկության երկու տարբեր վիճակները: Առաջին մասը նկարագրում է մարդու վիճակը փրկվելուց, ապաշխարելուց, վերստին ծնվելուց առաջ, իսկ երկրորդը՝ փրկվելուց հետո:

Առաջին չորս համարները մեղավոր մարդու վիճակը նկարագրում են որպես բնական, որ տակավին Աստծուն չի հանդիպել, մեղքերի և հանցանքների մեջ մեռած է: Մեղավորի հոգին մեռած է, ուստի այն անձը, որ մեռած է, իր շրջապատի մարդկանց հետ հարաբերություն և հաղորդակցություն չի կարող ունենալ: Երբ Աստված ստեղծեց Ադամին ու Եվային, ասաց նրանց, որ եթե Կենաց ծառի պտուղից ուտեն, կմեռնեն: Նրանք, անհնազանդ գտնվելով, կերան, սակայն ոչ թե ֆիզիկապես մեռան, այլ հոգեպես, այսինքն՝ Աստծո հետ նրանց ունեցած հաղորդակցությունը և հարաբերությունը դադարեց: Մեղավոր մարդը Աստծո հետ հաղորդակցություն, հարաբերություն չունի, որովհետև մեղքի մեջ մեռած է: Երկրորդ համարն ասում է, որ մեղավորը, որ մեռած է, քայլում է մեղքի մեջ: «Քայլել» բառը Աստծո խոսքում նշանակում է «կյանք», «ապրել»: «Որոնց մեջ մի ժամանակ քայլում էիք այս աշխարհի ընթացքով, ըստ օդի իշխանության իշխանի»: Ուրեմն ի՞նչ է նշանակում մեռած և ի՞նչ է նշանակում քայլել, ապրել: Մեղավորը, որ ֆիզիկապես ապրում է, իր մտքով ու մտքի ցանկություններով է կառավարվում, սակայն նրա հոգևոր կյանքը մեռած է: Ուրեմն մեղավորը իր մարմնի համար ապրում է ու մտքի ուզածն անում է, սակայն Աստծո համար և Աստծո հետ կյանք չունի: Ունեցած կյանքը սեփական անձի համար է: Առաքյալն ասում է, որ մենք այդպիսին էինք. մեր մտքի ու մարմնի ուզածն էինք անում, բնությանը բարկության որդիներ էինք: Սա նշանակում է, որ մենք աշխարհի ստեղծագործության ժամանակից բարկության որդիներ ենք: Ադամի որդիներ լինելով՝ Ադամով մեղանչեցինք, ուրեմն բնությամբ մեղավոր ենք ծնվել, և այդ պատճառով է, որ մեղք ենք գործում:

Առաքյալը մեր անցյալը ներկայացնելուց հետո խոսում է մեր ներկայի մասին: 4-րդ և 5-րդ համարներում այսպես է գրված. «Բայց Աստված, որ մեծ է ողորմությունով, իր առատ սիրույն համար որով մեզ սիրեց երբ յանցանքներու մեջ մեռած էինք, մեզ Քրիստոսի հետ կենդանացուց»: Մեռած էինք, մեղավոր էինք, մեր ցանկություններին էինք ծառայում, բարկության որդիներ էինք, այս օդի իշխանի՝ սատանայի գերիներն էինք: Մեղավորը կարծում է, թե ինքն ազատ է, սակայն սատանայի գերին է: Այդ պատճառով Հիսուսն ասել է, նա ով Որդուն կրնդունի, ճշմարտապես ազատ կլինի, բայց նա որ Հիսուս Քրիստոսի բերած փրկությունը չընդունի, սատանայի գերին է, սատանայի ծառան: Եթե մեղավորը սա հասկանա, չի ուզի շարունակել իր մեղավոր կյանքը: Չե՞ք հանդիպել շատ անդարձ հոգիների, որոնք վատ սովորություններ ունեն, զզվել են, ձանձրացել են, չեն ուզում ապրել այս կյանքը, սակայն շարունակում են, քանի որ իրենց աստվածը սատանան է, օդի իշխանը, և նա նրանց դրդում է՝ անելու արարքներ, և նրանք էլ խեղճ գառնուկների նման սատանայի հրամայածը լիովին կատարում են, որովհետև նրա գերին են, նրա ծառան են, բայց հավատացյալը սատանայի ծառան չէ:

Այսօր աշխարհի վրա ամեն բան ավելի առատ է, քան տարիներ ու դարեր առաջ: Ավելի գիտություն կա, ավելի դրամ կա, ավելի ուսում կա, ավելի շատ բաներ կան: Վերջերս թերթի մեջ կարդում էի, թե գալիք հիևզ տարիների ընթացքում մարդկանց գիտությունը կրկնապատկվելու է: Աշխարհն արագ զարգացման ընթացքի մեջ է բոլոր ասպեկտներով, բայց միևնույն ժամանակ այն տառապում է սիրո չքավորությունից: Մարդկությունը սիրո կարոտ է: Տեսնում ենք, որ մարդկանց մեջ սեր չկա: Բայց Աստված մեզ սիրեց, մեր մեռած վիճակից մեզ կենդանացրեց, մեր մեղքերից հարուցանեց ու մեզ կյանք շնորհեց: Հավատացյալը, որին հասել է Աստծո սերը, կենդանացած է և ունի հավիտենական կյանք: Այս փրկությունը, որ ստանում ենք, մեզանից չէ, այլ Նրա շնորհով է, հավատքի միջոցով: Եվ սա Աստծո պարգևն է մեզ: Ուրեմն մենք մեր գործերով չենք փրկվում, որպեսզի ոչ որ չպարծենա. ոչ ոքի կարողությամբ, ոչ ոքի գիտությամբ, ոչ ոքի մեծությամբ չէ, հապա Աստծո առատ ողորմությունով է, որ մեզ սիրեց ու մեզ փրկեց: Ինչո՞վ. հավատքով:

Հավատացյալի ամենամեծ երգը այս է. «Մեռած էի, բայց հիմա ապրում եմ, կույր էի, բայց հիմա տեսնում եմ, կապված էի, բայց հիմա ազատ եմ, սատանային էի ծառայում, բայց հիմա Աստծո զավակ եմ»: Սա է տարբերությունը. փրկությունը գործերից չէ, այլ Քրիստոսի առատ ողորմությամբ է: Մի բան, որ առատ է, բոլորին է հասնում, սակայն մի բան, որ քիչ է, բոլորին չի հասնում: Օրինակ՝ այն երկրներում, որտեղ պատերազմի պատճառով ուտելիքի նեղություն կա, մարդիկ հերթ են կանգնում, սպասում են, որ իրենց օրվա ուտելիքը գտնեն, բայց Աստծո սերն առատ է, սպասելու կարիք չունես: Ուստի մխրճվի՛ր Նրա մեջ, նետվի՛ր Նրա գիրկը, ու Նա առատ սիրով ներում կշնորհի քեզ ու Իր զավակը կդարձնի: 5-րդ համարն ասում է, որ երբ հանցանքների մեջ մեռած էինք, Քրիստոսը մեզ կենդանացրեց, մեզ նոր, հավիտենական կյանք տվեց: Պողոս առաքյալն ասում է. «Ես Քրիստոսի հետ խաչը ելա: Այսուհետև ո՛չ թե ես եմ ապրում, այլ Քրիստոսն է, որ ապրում է իմ մեջ»: Սա է հավատացյալի կյանքը. ոչ թե մեռած, ոչ թե սատանայի ծառա, հապա Քրիստոսի, որ ապրում է իր մեջ: Երանելի ենք, եթե այս վկայությունը ունենք. «Մեռած էի, բայց հիմա կենդանի եմ, սատանայի կամքն էի կատարում, բայց հիմա Աստծո զավակն եմ»: Ամեն:

Վեր.՝ Հապիպ Ալաճաճի

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

«Բայց Աստված նրանցից շատերին չհավանեց, դրա համար էլ անապատում կործանվեցին: Եվ այս ամենը օրինակ եղավ մեզ համար, որ մենք չար բաների ցանկացողներ չլինենք, ինչպես նրանք ցանկացան: Ո՛չ էլ կռապաշտ լինենք, ինչպես նրանցից ոմանք, ինչպես գրված է. «Ժողովուրդը նստեց ուտելու և խմելու ու ելան պարելու»: Ո՛չ էլ պոռնկություն անենք, ինչպես նրանցից ոմանք արեցին և մեկ օրում քսաներեք հազար հոգի ընկան: Ո՛չ էլ Քրիստոսին փորձենք, ինչպես նրանցից ոմանք փորձեցին և օձերից կործանվեցին»:

(Ս Կորնթ. 10:5-9)

Ո՞վ է Հիսուսը

Հովհ. 1

Ո՞վ է Հիսուսը, որ երկրպագում ենք. հաճախ են մարդիկ այս հարցը տալիս: Համառոտ պատասխանն է. «Հիսուսն Աստված է»: Բայց թույլ տվեք ավելին ասել: Հիսուսը եկավ մեզ հետ ապրելու, Իր աստվածային բնության վրա մարդեղություն «հագնելով»՝ մեզ մեղքից փրկելու: Նա միայն մարգարե, բարեփոխող, րաբբի, իմաստուն մարդ, հրաշագործ և լավ օրինակ հանդիսացող բարոյականության ուսուցիչ չէր, այլ նաև Աստված էր՝ մարմնով հայտնված, Էմմանուելը՝ Աստված մեզ հետ է:

Փրկությունը Նրա շնորհիվ է և Նրա միջոցով: Հիսուսը սովորեցրեց, որ մենք պետք է մոտենանք ու հետևենք Իրեն, Նա մատնացույց արեց Ինքը Իրեն՝ ասելով, որ Ինքն է կյանքի հացը, աշխարհի լույսը, հարությունը, ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը: Մենք պետք է Հորը մոտենանք Հիսուսի միջոցով: Միայն մարմնացյալ Աստված կարող էր մման ազդարարություններ անել: Քրիստոսի մասին հետևյալ ակնարկները (քաղված տարբեր աղբյուրներից) վերագրվում են Նապոլեոն Բոնապարտին:

«Մարդիկ, ես գիտեմ և ձեզ էլ եմ ասում, որ Հիսուս Քրիստոսը մարդ չէր: Մակերեսայնորեն մտածողները նմանություն են տեսնում Քրիստոսի և կայսրությունների հիմնադիրների կամ մյուս կրոնների աստվածների միջև: Այդպիսի նմանություն գոյություն չունի. Քրիստոսի և մյուս կրոնների միջև անսասան հեռավորություն կա:

Քրիստոսից բացի՝ մյուս բոլոր գոյությունները խիստ անկատար են: Առաջին օրվանից մինչև վերջին օրը Նա նույնն է՝ վեհասքանչ ու հստակ, անսահման հաստատակամ ու մեղմ: Նա մի քանի խորհուրդ է հրամցնում և իշխանությամբ պատվիրում է, որ պետք է հավատանք ու համաձայնենք այս ազդու խոսքերին. «Ես Աստված եմ»»:

Քրիստոսի ամեն ինչը՝ թե՛ հոգին, թե՛ կյանքը, ինձ զարմանք են պատճառում և ապշեցնում: Նա անզուգական է, ճշմարիտ էություն,

նրա մտքերն ու սկզբունքները, արտահայտած ճշմարտությունները, համոզականությունը հնարավոր չէ բացատրել մարդկայնորեն: Նրա կրոնը հայտնություն է՝ տրված մի խելամիտ ու բանական էության կողմից, որը, անշուշտ, մարդ չէ. Նրա կյանքի օրինակն անկրկնելի է: Որքան ավելի եմ մոտենում, այնքան ավելի եմ հավատում, որ ամեն բան ինձանից վեր է, ամեն ինչ շատ վեհասքանչ է: Դա ուժ է տալիս ինձ: Պատմության մեջ իզուր եմ փնտրում Հիսուս Քրիստոսի նման մեկին կամ Ավետարանի նման որևէ բան: Ո՛չ պատմությունը, ո՛չ մարդիկ, ո՛չ անցյալ դարերը, ո՛չ էլ բնությունը չեն կարողանում ինձ առաջարկել մի բան, որի հետ կարողանամ համեմատել Ավետարանը. Նրա մեջ ամեն բան արտառոց է:

Փիլիսոփաները փորձում են իրենց ունայն թեզերով լուծել տիեզերքի առեղծվածը: Անմիտներ, նրանք նման են այն երեխային, որը լացում է և ուզում, որ լուսինը երկնքից իջեցնեն, նրանով խաղա:

Քրիստոսը երբեք չի երկմտում: Նա փնտրում ու բացարձակապես պահանջում է աշխարհի ամենադժվար գտնվող բանը՝ մարդկանց Սերը:

Ա. Մակեդոնացին, Կեսարն ու Հաննիբալը նվաճեցին աշխարհը, բայց չունեին ընկերներ: Ես հավանաբար մեր օրերի միակ մարդն եմ, որ սիրում եմ Ա. Մակեդոնացուն և Հ. Կեսարին:

«Շառլե Մայնը և ես կայսրություններ ենք հիմնադրել: Բայց ինչի՞ վրա ենք հիմնել մեր հանճարը, ուժի: Միայն Հիսուս Քրիստոսն է, որ Իր թագավորությունը հիմնեց սիրո վրա: Եվ հենց այս պահին աշխարհում միլիոնավոր մարդիկ պատրաստ են Նրա համար իրենց կյանքը տալու: Ես ցնցված եմ՝ տեսնելով այն տարբերությունը, թե Քրիստոսն ինչ ճանապարհով հասավ դրան, և մենք՝ ես, Կեսարն ու Մակեդոնացին, ինչ ճանապարհով փորձեցինք հասնել: Մեր շուրջը հավաքվեցին վախի պատճառով, իսկ Քրիստոսի շուրջը՝ սիրո մղումով: Մակեդոնացին, Կեսարն ու ես պատերազմի մարդիկ էինք, իսկ Քրիստոսը՝ խաղաղության: Մարդիկ պարտադրանքով էին մեզ մոտ գալիս, բայց ինքնակամ ձգվում էին դեպի Քրիստոսը: Մեր դեպքում զորակոչը բռնի էր, իսկ Քրիստոսին հնազանդվում էին ազատ կամ-

քով: Ես մեծ եռանդով այնպես եմ ոգեշնչել բազմաթիվ մարդկանց, ովքեր պատրաստ էին մեռնելու ինձ համար, բայց իմ ներկայությունն անհրաժեշտ էր նրանց ոգևորելու համար: Իսկ հիմա, երբ Սուրբ Հելենայում եմ, ո՞ր եմ իմ ընկերները, շուտով հողին պիտի վերադառնամ ու որդերի կերակուր դառնամ: Մեծ վիհ կա իմ թշվառության ու Քրիստոսի հավիտենական թագավորության միջև: Նրա մասին քարոզում եմ, Նրան սիրում եմ, Նրա համբավը տարածվում է աշխարհով մեկ, մի՞թե սա մահն է: Ասում եմ ձեզ՝ Քրիստոսի մահն Աստծո մահ է, հավաստիացնում եմ ձեզ՝ ՀԻՍՈՒՄ ԶԻՒՍՏՈՄՆ ԱՍՏՎԱԾ Է, նա կարող է փոխել ինձ, քեզ և մեր կյանքերը: Միայն Աստված կարող է մեզ նոր կյանք տալ, բուժել ու ներել: Քանի որ Աստված եղել է ու կա, Նրա խաչի մահը բավարար էր քո և իմ մեղքերի գինը վճարելու համար: Հարցն այն չէ, թե ով էր Հիսուս Քրիստոսը, այլ այն, թե ով է Նա հիմա»:

Դու հավատո՞ւմ ես, որ Հիսուսն Աստված է: Եթե հավատում ես, ապա արդյոք նա քո Տե՞րն է:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան



Ասլանի թաթը

«Տանս մեջ հսկայական առյուծի պատկերը կախված է պատից, որի թաթերում փոքրիկ տղա կա: Տղան, որ մեծ սպի ունի գլխին, նայում է առյուծի աչքերին: Ես եմ այդ տղան ու այդ պատկերը իմ պատմությունն է», - ասում է Դանիել Դեյլին՝ 18-ամյա մի պատանի, որի այս պատմությունը շահել է առաջին մրցանակը «Guideposts» ամսաթերթում:

«12 տարեկան էր, երբ բժիշկն ասաց, որ ուղեղիս ետևի մասում մխրճված մեծ ուռուցք կա հավկիթի չափ: Ապրելու հնարավորութ-

յունս քիչ էր, իսկ վիրահատությունը՝ շատ վտանգավոր: Կարող էի կորցնել հավասարակշռությունս, նաև խոսելու, ծամելու կամ կուլ տալու կարողությունս»:

Բժիշկը որոշեց 11 օր հետո վիրահատել ինձ: Մրանք եղան կյանքիս լավագույն օրերը: Մարդիկ, որոնք սիրում էին ինձ, և ոմանք, որ ինձ չէին ճանաչում, իրենց սերը հայտնեցին նվերներով և հատուկ ուշադրություն դարձնելով: Սակայն ոչինչ չէր կարողանում միտքս հեռացնել մոտալուտ վիրահատությունից: Մրանք կարող էին լինել կյանքիս վերջին օրերը: Չէի ուզում դրա մասին մտածել, բայց գիշերները բոլոր վախերս սենյակս էին լցվում: Երկնքի մասին շատ հարցեր էի տալիս: Ուզում էի, որ մայրս կողքս քներ: Հակառակ ծնողներիս տազնապած վիճակին՝ Աստծո հանդեպ նրանց ունեցած սիրո և հավատքին էի հենված:

Մայրս միշտ գիրք էր կարդում ինձ համար, որ քնեմ: Այդ 11 օրերում նա կարդաց իմ շատ սիրած գրքերից մեկը՝ C. S. Lewis-ի «Վերջին պատերազմը», որ Նարնիայի շարքից վերջինն է: Այնտեղ առասպելական երկիր կա, որտեղ բարի և զորեղ առյուծը՝ Ասլանն է իշխում:

Մինչ թշնամին մոտենում էր, Նարնիան գրեթե վստահ էր, որ պարտվելու են և ոչնչանան: Հենց պատերազմից առաջ մի երեխա շշուկով իր վախերը պատմում է թագավորի ակամջին: «Քաջություն, զավակս, - պատասխանում է իշխանը, - բոլորս Ասլանի թաթերի մեջ ենք»:

Երբ այս բառերը լսեցի, մայրիկիս ասացի. «Մամ՛, ես էլ Աստծո ձեռքերում եմ ապահով»: Կասկած չունեի, որ Նա ինձ բռնել է՝ հակառակ այն բանի, որ դեռ ցավի ու վախի մեջ էի: Գիտեի, որ Նա ինձ առաջնորդում էր մի ճանապարհով, որով չէի ուզում գնալ, բայց հավատում էի, որ Նա բարի և վստահելի է:

Որոշված օրը՝ արշալույսից առաջ, հասանք հիվանդանոց, որտեղ ութ ժամ տևող շատ վտանգավոր վիրահատություն ունեցա: Երբ արթնացա, անտանելի ցավի մեջ էի: Վեց ինչանոց պատռվածք ունեի գլխիս ետևում: Անընդհատ փսխում էի: Հայրս նրբորեն բռնում էր

գրուխս, երբ ամեն վայրկյան փսխում էի, և կրկին կամաց դնում էր բարձի վրա: Այս ահռելի վիճակում էի, երբ բուժքույրը եկավ և ասաց, որ ՄՆ-Տ-ի պետք է գնամ, որպեսզի իմանան, թե արդյոք վիրահատությունը հաջող է անցել, ու ինչ բուժում պետք է ստանամ:

Հորս աչքերում արցունք կար: Նա կամաց գրկեց ինձ և դրեց սայլակին, գրուխս բռնեց, որ ցնցումից չշարժվի, ու կրկին ասաց. «Քեզ շատ եմ սիրում»: «Պատկերացրո՛ւ, որ դու և ես մեր շատ սիրած լճակի վրա նավարկում ենք», - փափսաց հայրս ականջիս, ու նրա սերը և գործությունը ինձ հանգստացրեց: Ջարմանալի էր, բայց երբ ՄՆ-Տ-ի գործիքի մեջ մտա, վիրահատությունից հետո առաջին անգամ կարողացա խորը շունչ քաշել: Հայրս կարող էր պնդել, որ ՄՆ-Տ չանցնեմ, և իրականում դա էր նրա սրտի փափագը, բայց երբ իմացավ, որ անհրաժեշտ է, համաձայնեց: Ապա արեց ամեն բան իր կարողության չափով, որ ինձ հանգստացներ, որպեսզի իր սիրով և գործությամբ շրջապատվեի:

Մի քանի շաբաթ հետո հիվանդանոցից դուրս գրվեցի լիովին բուժված: Բայց երկու տարի անց, երբ 14 տարեկան էի, ուռուցքը նորից երևաց: Ավելի մեծ վիրահատության կարիք ունեի: Հիվանդանոց գնալուց առաջ ծնողներս նկարչին խնդրեցին, որ պաստառի վրա մի առյուծ նկարի, որի թաթերի մեջ ես ապահով էի:

Շատ եմ սիրում այս պատկերը, որ իմ կյանքի պատմությունն է: Ինչպես որ Ասլանի թաթերը Նարնիան պահեցին, իմ հոր սիրալիր ձեռքերը ինձ պահեցին ու հանգստացրին:

Նույնպես էլ իմ Երկանավոր Հոր ձեռքերն են անում: Նա այս աշխարհի տված ցավն ու տառապանքը չի վերցնում, բայց Իր հայրական ու սիրալիր ձեռքերը երբեք չեն թուլանում Իր սրտի մոտ ինձ ամուր պահելուց:

Քաղված՝ «Օրինաբեր նունենին» գրքից



Ձմեռը Հայաստանում

Տարիներ առաջ ձմռանը Հայաստան այցելեցի, երբ օդի ջերմաստիճանը տեղ-տեղ մինչև -25-ի էր հասնում:

Կիրակի առավոտյան հրավիրված էի Երևանի եկեղեցիներից մեկում քարոզելու: Ձմռան առավոտ էր, -12 աստիճան ցուրտ, և միևնույն ժամանակ ձյուն էր տեղում: Մինչ մոտենում էի եկեղեցաշենքին, մի կին, իր երեխային գրկած, մոտեցավ՝ ինձանից գումար մուրալու: Ես ամաչեցի ամբոխի առջև դրամապանակս հանել, ուստի խնդրեցի նրան ներս մտնել՝ խոստանալով, որ ծառայությունից հետո կհանդիպեմ նրա հետ:

Երբ ժողովն ավարտվեց, երեցներն ու հովիվն ինձ հրավիրեցին կողքի սենյակ՝ մի բաժակ սուրճ խմելու: Մենյակում մոտավորապես տասը անձ կար: Դուռը փակվեց, և մեզ ուտելիք հյուրասիրեցին:

Դուռը քակեցին: Ինչ-որ մեկը կանչեց՝ ասելով, թե դուրսը մի կին կանգնած սպասում է մեր հյուրին՝ հանդիպելու համար: Անմիջապես հիշեցի, որ խնդրել էի այդ կնոջը ինձ սպասել: Հովիվը բարկացավ և բղավեց՝ ասելով, թե սա մուրացկանի տունն չէ, թող հեռանա: Մեր գրույցն ու աղոթքն ավարտելուց հետո ես անմիջապես դուրս եկա՝ նրան փնտրելու: Շենքում ոչ ոք չկար: Ես դուրս եկա, ձյունը դեռ չէր դադարել: Երբ դարպասներից դուրս եկա, ձախ մայթին տեսա այս կնոջը, որը նստած էր ձյան մեջ: Երեխան, որը կրծքին քնել էր, միզել էր մոր հագուստների վրա: Երբ հիշում եմ այդ տեսարանը, մտքիցս չեմ կարողանում հանել: Նա նայեց ինձ և ասաց, թե հովիվը շատ հաճելի մարդ է, ով շատ անգամ օգնել է իրեն: Նա տանը չորս զավակ ունեւր, և ձմռանը սնունդ և տաքանալու միջոց չունեին:

Արդյոք կուզե՞ք օգնել մեզ՝ օգնելու նրանց, որոնք տառապանքների ու չքավորության մեջ են: Օգնե՞ք մեզ, որպեսզի սուրբճնընդյան օրերում կարողանանք կարիքավոր ընտանիքներին ապահովել ջերմությամբ ու սնունդով:

Հ. Գ.